ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/13

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.01.2018թ. թիվ 03/26-3/979-18 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.01.2018թ. թիվ ԴՎԱ/194 գրության հիման վրա, 24.01.2018թ. թիվ 03/26-3/979-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ա/Ձ Գրիգոր Այվազյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Գրիգոր Այվազյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը Խորհրդին ուղղված 30.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ առկա չեն հիմքեր Մասնակցին ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքվել է ապրանքի մատակարարման պետական գնման թիվ «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն՝ մասնակիցը պետք է մատակարարեր հեռախոսային կայաններ (մինի ԱՀԿ PBX-24-Panasonic):

4. Պայմանագրի թիվ 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. 3-րդ եռամսյակում:

5. ՀՀ պաշտպանության նախարարության 18.01.2018թ. թիվ ԴՎԱ/177 գրության համաձայն՝ պատվիրատուի և մասնակցի միջև կնքված պայմանագրի համաձայն, մասնակիցը պարտավոր էր պատվիրատուին 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել հավաքածու հեռախոսային կայաններ (մինի ԱՀԿ PBX-24-Panasonic):

Պատվիրատուն հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ միակողմանի լուծել է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման

գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոհիշյալ իրավական և փաստական հանգամանքներից, Մասնակիցը գտնում է, որը Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, այն է՝ չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված միակ՝ հեռախոսային կայաններ (մինի ԱՀԿ PBX-24-Panasonic) ապրանքատեսակը, Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում, ինչի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.01.2018թ. թիվ ԴՎԱ/177 գրությամբ Պայմանագիրը միակողմանի լուծարել է, իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյանը խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի Մասնակիցը գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.01.2018թ. թիվ 03/26-3/979-18 գրությամբ ներկայացված Ա/Ձ Գրիգոր Այվազյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Մասնակցին չներառել ցուցակում:

Ա/Ձ Գրիգոր Այվազյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկ-ները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.01.2018թ. թիվ ԴՎԱ/194 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն 17.01.2018թ. միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագիրը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 18.01.2018թ. ուղարկվել է Մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին և նույն օրը հրապարակվել www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/13 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/13 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով Ա/Ձ Գրիգոր Այվազյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

3. Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել հեռախոսային կայանների (Մինի ԱՀԿ PBX-24 (Panasonic) 5 հավաքածու:

4. Ա/Ձ Գրիգոր Այվազյանին ուղղված 18.01.2018թ. ԴՎԱ/177 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 17.01.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.01.2018թ. թիվ 03/26-3/979-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.01.2018թ. թիվ ԴՎԱ/194 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ

որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով Ա/Ձ Գրիգոր Այվազյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Մասնակիցը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել հեռախոսային կայանների (Մինի ԱՀԿ PBX-24 (Panasonic) 5 հավաքածու:

ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության, որպես Պայմանագրի 9.13 կետով նախատեսված պատասխանատու ստորաբաժանման կողմից 20.12.2017թ. կազմված՝ Պայմանագրի կատարման վերաբերյալ թիվ 1/174 եզրակացության համաձայն՝ Պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Գրիգոր Այվազյանը 15.07.2017թ. մինչև 20.12.2017թ. ընկած ժամանակահատվածը մատակարարումներ չի իրականացրել:

Պատասխանատու ստորաբաժանումը, հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 3.1.1 կետի պահանջները, Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից 15.07.2017թ. «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագրի կատարման վերաբերյալ տվել է բացասական եզրակացություն:

Ա/Ձ Գրիգոր Այվազյանին ուղղված 18.01.2018թ. ԴՎԱ/177 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր էր Պատվիրատուին 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 5 հավաքածու հեռախոսային կայաններ:

Նշված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պատվիրատուի և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 17.01.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպես՝ Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից թույլ է տրվել ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Գրիգոր

Այվազյանի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-8» ծածկագրով պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Մասնակիցը Պայմանագրով պարտավորվել է 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել հեռախոսային կայանների (Մինի ԱՀԿ PBX-24 (Panasonic) 5 հավաքածու, մինչդեռ համաձայն պատասխանատու ստորաբաժանման համապատասխան եզրակացության՝ Մասնակցի կողմից 15.07.2017թ. մինչև 20.12.2017թ. ընկած ժամանակահատվածում մատակարարումներ ընդհանրապես չեն իրականացվել, որի հետևանքով Մասնակիցը, համաձայն Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի, էականորեն խախտել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, Խորհուրդը գտնում է, որ առկա չէ Մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.01.2018թ. թիվ 03/26-3/979-18 գրությամբ Ա/Ձ Գրիգոր Այվազյանին (ՀՎՀՀ՝ 84485538) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**